Ե·

ՅԱԿՈՎԲ Գ ԿԱԹՈՂԻԿՈՍ· — ՊԾԸ = 1410· ՅՈՒՆԻՍ 26·

ԱՅՍ մեր գիր հոգեւորական բարձր հրամանի՝ հաստատութիւն է եւ աւրհնութիւն, ՅԱԿՈԲԱՅ ծառայի ծառայիցն Քրիստոսի Յիսուսի Աստուծոյ Տեառն մերոյ· Շնորհաւք եւ ողորմութեամբ նորին Եպիսկոպոսապետի Մեծաց Հայոց եւ պատրիարքի ամենայն արեւելից [1] եւ Վաղարշապատու· Զոր աւրհնութեամբ եւ հայրական հոգեբարձութեան գթով գրեմք ի յամենաւրհնեալ եւ յաստուածապահ յանուանի եւ յականաւոր թագաւորանիստ քրիստոսական մայրաքաղաքն ի Լոնդն եւ յամենայն վիճակն իւր բոլորովին, Սերաթն, ի Զեյտն, ի Կամենիցն, ի Լուցկայն, ի յԱլատէմուրն, ի Մանքրմանն ի Վրլախաց երկիրն եւ ի Պրտինն, ի յԸնկիսալայն եւ ի յայլ ամենայն թիւն իւր առհասարակ։ Սէր ի Քրիստոս Աստուած հաւատարիմ ըստ հոգւոյ յոյժ սիրեցեալ ցանկալի եւ պարծանաց որդոցդ, Պատվական եւ սրբասէր քահանայիցդ, աստուածասէր եւ բարեպաշտ պարոնացդ եւ ավագաւորացդ, փառաւոր խաւճանոյդ եւ պուռճէանոյդ [2], իմաստուն վաճառականացդ, հարկաւոր եւ բարեգործ տանուտրացդ, ձեռնաքմուտ արուեստագէտացդ, աշխատասէր հողագործացդ, եւ ամենայն հայասեռ եւ քրիստոսաստուածադաւան մերոց ժողովրդականացդ, արանց եւ կանաց, ծերոց եւ տղայոց, երիտասարդաց եւ կուսից, մեծամեծաց եւ փոքունց եւ ամենայն չափոյ հասակի։ Որոց այդոցիկ ամենեցուն ի միասին առ հասարակ, մեծավ փափաքմամբ՝ կարողութեամբն Աստուծոյ Հաւր, զաւրութեամբ Որդոյն միածնի Յիսուսի Քրիստոսի, ի ձեռն Հոգւոյն Սրբոյ, Առաքեմք ձեզ ողջոյն սիրոյ ի մէջ և աւրհնութիւն առաքելական, ի յաստուածընկալ սուրբ Նշանէս Վանկկոյ և ի շնորհաբաշխ աղոյս մեր Սուրբ Լուսաւորչին Գրիգորի, և յերկնահանկէտ սուրբ աթոռոյս առաքելական, և մեր սուրբ առաքելոցն Թադէոսի և Բարթողիմէոսի, և ի յայլ սուրբ Նշխարացս առաքելոց և մարտիրոսաց՝ որք աստ են։ Զորոց սոցա արագահաս աքանչելագործ կարող զաւրութեամբն և աւրհնութեամբն պահպանեալ փրկեսջիք յամենայն վտանգից փորձանաց հոգւոյ և մարմնոյ տեսամբ [3] և որդովք և ամենայն գոյիւք· ամէն։ Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն սիրելի որդիք մեր ի

1· Տես զծանութիւնն յերես 9։

2· Տես զծանութիւնն ի նոյն 9 երես։

3· Տամբ, անով։